

## Տ. ՇՆՈՐՀՔ ԱԲԵՂԱ ՍԱՐԳՍՅԱՆ
(ավազանի անունը՝ Մուշեղ)

Ծնվել է 1980 թ. փետրվարի 4-ին, Արմավիրի մարզի Արևաշատ գյուղում:

1987-1997 թթ. սովորել է տեղի միջնակարգ դպրոցում:

1997-2003 թթ. սովորել է Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցում, իսկ այնուհետև՝ Ս. Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանում:

2003 թ. դեկտեմբերի 24-ին՝ Ս. Ստեփաննոս նախավկայի տոնին, ձեռամբ Տ. Սիոն եպս. Ադամյանի, ձեռնադրվել է սարկավագ:

2003 թ. հուլիսից ծառայության է նշանակվել նախ «Էջմիածին» ամսագրի խմբագրությունում, ապա Գևորգյան Հոգևոր Ճեմարանում որպես վերակացու:

2004 թ. մարտի 2-ին պաշտպանել է ավարտաճառ՝ «Վարդան Արևելցին և նրա Ժղլանքը» թեմայով:

2004 թ. մայիսի 2-ին, ձեռամբ Տ. Աբրահամ եպիսկոպոս Մկրտչյանի, ձեռնադրվել է կուսակրոն քահանա: